Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

# ՀԱՎԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ



ԵՐԵՎԱՆ - 2007

ՀՏԴ

ԳՄԴ

Ս –

Ս –     ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ՀԱՎԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ: - Երևան,
2007.- 56 էջ:

ԳՄԴ

ISBN

© ԱՍՈՂԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ, 2007 թ.

Թարգմանությունը
գրաբարից՝
Ասողիկ եպիսկոպոսի



# ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

(1100-1173)

*Ս. Ներսես Շնորհալին հայ ամենաբազմարդյուն և բազմավաստակ մատենագիրներից է, համաքրիստոնեական չափանիշով մեծ մատենագիր: Նրա մատենագրական ժառանգությունը գրեթե անկորուստ հասել է մեզ: Գործերի մեծ մասը տպագրվել է, թարգմանվել տասնյակ լեզուներով և բազմիցս վերահրատարակվել: Նրա բազմաժանր ստեղծագործությունները՝ աստվածաբանական, դավանական, մեկնողական, ծիսապաշտամունքային, պատմական, փիլիսոփայական, մանկավարժական բնույթի երկերը, բանաստեղծություններն ու պոեմները, նամակներն ու քարոզները, աղոթքներն ու շարականները հայոց «արծաթե դարի» և Կիլիկյան Հայաստանի պատմության առաջին շրջանի հոգևոր-մշակութային, կրոնաաստվածաբանական մնայուն արժեքներից են, որտեղ արտահայտված են ժամանակի ազգային-քաղաքական տրամադրությունները, Հայոց պետության և Հայ եկեղեցու գաղափարախոսությունը, վերջինիս ինքնանկախության, ազգային նկարագրի, ուղղափառության պաշտպանությունը: Ներսես Շնորհալու մատենագրական վաստակն ընդունված է բաժանել երկու մասի՝ արձակ և չափածո:*

*Ներսես Շնորհալու չափածո գրվածքների մեջ իր ուրույն տեղն ունի «Հավատով խոստովանիմ» նշանավոր աղոթքը: Առաջին անգամ լույս է տեսել 1616-ին, Լվովում, «Սաղմոս ի Դաւիթ» գրքում, ապա՝ 1616-ին Ամստերդամում՝ «Կարճառօտ ժամագիրք» ժողովածուում: Առանձին գրքով առաջին անգամ հրատարակվել է Վենետիկում, 1690-ին, այնուհետև բազմիցս վերահրատարակվել: «Հավատով խոստովանիմ»-ը համաշխարհային հոգևոր գրականության գոհարներից է (թարգմանվել է 36 լեզուներով): Բաղկացած է 24 տնից (օրվա 24 ժամերի համեմատ) և բովանդակում է աղոթքի բոլոր տեսակները (դավանական, զղջական, պաղատական, խոստովանական և այլն): Հեղինակն այն անվանել է «Քրիստոսին հավատացող յուրաքանչյուր անձի աղոթք»: Գրված է արձակ, բայց հոգևոր ապրումների, հույզերի հարստությամբ և ներքին ռիթմով ազատ բանաստեղծություն է:*

*Աստղիկ եպիսկոպոս*





# ՀԱՎԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ



Ա

Հաւատով խոստովանիմ
Եւ երկիրպագանեմ Քեզ,
Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի,
Անեղ եւ անմահ բնութիւն,
Արարիչ հրեշտակաց եւ մարդկան
Եւ ամենայն եղելոց.
Եւ ողորմեա Քո արարածոց
Եւ ինձ՝ բազմամեղիս:



Ա

Հավատով խոստովանում
Եվ երկրպագում եմ Քեզ,
Հայր և Որդի և Սուրբ Հոգի,
Անստեղծ և անմահ բնություն,
Արարիչ հրեշտակների և մարդկանց
Եվ բոլոր եղածների.
Եվ ողորմի՛ր Քո արարածներին
Եվ ինձ՝ բազմամեղիս:

Բ

*Հաւատով խոստովանիմ*
*Եւ երկիրպագանեմ Քեզ,*
*Անբաժանելի լոյս,*
*Միասնական Սուրբ Երրորդութիւն*
*Եւ մի Աստուածութիւն,*
*Արարիչ լուսոյ եւ հալածիչ խաւարի,*
*Հալածեա ի հոգւոյ իմմէ*
*Զխաւար մեղաց եւ անգիտութեան.*
*Եւ լուսաւորեա*
*զմիտս իմ ի ժամուս յայսմիկ՝*
*Աղօթել Քեզ ի հաճոյս*
*Եւ ընդունիլ ի Քէն*
*զխնդրուածս իմ.*
*Եւ ողորմեա Քո արարածոց*
*Եւ ինձ՝ բազմամեղիս:*



Բ

Հավատով խոստովանում
Եվ երկրպագում եմ Քեզ
Անբաժանելի լույս,
Միասնական Սուրբ Երրորդություն
Եվ մի Աստվածություն,
Արարիչ լույսի և հալածիչ խավարի,
Հալածի՛ր իմ հոգուց
Խավարը մեղքերի և անգիտության.
Եվ լուսավորիր
միտքն իմ այս ժամին՝
Աղոթել ի հաճույս Քեզ
Եվ Քեզանից ընդունել
իմ խնդրանքները.
Եվ ողորմի՛ր քո արարածներին
Եվ ինձ՝ բազմամեղիս:

## Գ

Հայր երկնաւոր,
Աստուած ճշմարիտ,
Որ առաքեցեր զՈրդիդ Քո սիրելի
Ի խնդիր մոլորեալ ոչխարին,
Մեղայ յերկինս եւ առաջի Քո.
Ընկալ զիս
Որպէս զանառակ որդին.
Եւ զգեցո ինձ
Զպատմուճանն զառաջին,
Զոր մերկացայ մեղօք.
Եւ ողորմեա Քո արարածոց
Եւ ինձ՝ բազմամեղիս:



## Գ

Հայր երկնավոր,
Աստվա՜ծ ճշմարիտ,
Որ առաքեցիր Քո սիրելի Որդուն
Ի խնդիր մոլորյալ ոչխարի,
Մեղա երկնքի և Քո առաջ,
Ընդունի՛ր ինձ,
Ինչպես անառակ որդուն,
Եվ հագցրու ինձ
Լավագույն պատմուճանը,
Որից մերկացա մեղքի պատճառով.
Եվ ողորմի՛ր Քո արարածներին
Եվ ինձ՝ բազմամեղիս:

## Դ.

Որդի Աստուծոյ, Աստուած ճշմարիտ,
Որ խոնարհեցեր ի հայրական ծոցոյ
Եւ առեր մարմին
Ի սրբոյ կուսէն Մարիամայ՝
Վասն մերոյ փրկութեան,
Խաչեցար, թաղեցար
Եւ յարեար ի մեռելոց
Եւ համբարձար փառօք
Առ Հայր.
Մեղայ յերկինս եւ առաջի Քո,
Յիշեա զիս որպէս զաւազակն,
Յորժամ գաս արքայութեամբ քով.
Եւ ողորմեա Քո արարածոց
Եւ ինձ՝ բազմամեղիս:



## Դ.

Որդի Աստուծո, Աստվա՜ծ ճշմարիտ,
Որ խոնարհվեցիր հայրական ծոցից
Եվ մարմին առար
Սուրբ կույս Մարիամից՝
Մեր փրկության համար.
Խաչվեցիր, թաղվեցիր
Եվ հարություն առար մեռյալներից
Եվ համբարձվեցիր փառքով
Հոր մոտ.
Մեղա՜ երկնքի և Քո առաջ,
Հիշի՛ր ինձ՝ ինչպես ավազակին,
Երբ գաս քո Արքայությամբ.
Եվ ողորմի՛ր Քո արարածներին
Եվ ինձ՝ բազմամեղիս:

*Հոգի Աստուծոյ՝ Աստուած ճշմարիտ,*
*Որ իջեր ի Յորդանան*
*Եւ ի վերնատունն*
*Եւ լուսաւորեցեր զիս մկրտութեամբ*
*սուրբ Աւազանին,*
*Մեղայ յերկինս եւ առաջի Քո.*
*Մաքրեա զիս վերստին*
*Աստուածային հրով Քով՝*
*Որպէս հրեղէն լեզուօք*
*Սուրբ զառաքեալսն.*
*Եւ ողորմեա Քո արարածոց*
*Եւ ինձ՝ բազմամեղիս:*





Հոգի Աստուծո, Աստվա՛ծ ճշմարիտ,
Որ իջար Հորդանան
Եվ վերնատուն
Եվ լուսավորեցիր ինձ մկրտությամբ
Սուրբ Ավազանի,
Մեղա՛ երկնքի և Քո առաջ,
Մաքրի՛ր ինձ վերստին,
Աստվածային Քո հրով
Ինչպես սուրբ առաքյալներին՝
Հրեղեն լեզուներով.
Եվ ողորմի՛ր Քո արարածներին
Եվ ինձ՝ բազմամեղիս:

**2**- *Ս. Ներսես Շնորհալի*

## Զ

*Անեղ բնութիւն,*
*Մեղայ Քեզ մտօք իմովք,*
*Հոգւով եւ մարմնով իմով,*
*Մի յիշեր զմեղս իմ զառաջինս*
*Վասն անուանդ քում սրբոյ.*
*Եւ ողորմեա Քո արարածոց*
*Եւ ինձ՝ բազմամեղիս:*



## Զ

Անստեղծ բնություն,
Մեղա Քեզ՝ իմ մտքերով,
Իմ հոգով և մարմնով,
Մի՛ հիշիր մեղքերն իմ նախկին
Քո սուրբ անվան համար.
Եվ ողորմի՛ր Քո արարածներին
Եվ ինձ՝ բազմամեղիս:

## Է

Տեսող ամենայնի,
Մեղայ Քեզ
Խորհրդով, բանիւ եւ գործով
Ջնջեա զձեռագիր յանցանաց իմոց
Եւ գրեա զանուն իմ
Ի դպրութեան կենաց.
Եւ ողորմեա Քո արարածոց
Եւ ինձ՝ բազմամեղիս:



## Է

Ո՜վ ամենատես,
Մեղա Քեզ,
Մտքով, խոսքով և գործով
Ջնջի՛ր ձեռագիրն իմ հանցանքների
Եվ գրիր անունն իմ
Կյանքի գրքի մեջ.
Եվ ողորմի՛ր Քո արարածներին
Եվ ինձ՝ բազմամեղիս:

## Ը

Քննող գաղտնեաց,
Մեղայ Քեզ կամայ եւ ակամայ,
Գիտութեամբ եւ անգիտութեամբ,
Թողութիւն շնորհեա մեղաւորիս.
Զի ի ծննդենէ սուրբ Աւազանին
Մինչեւ ցայսօր
Մեղուցեալ եմ
Առաջի Աստուածութեանն քո
Զգայարանօք իմովք
Եւ ամենայն անդամօք մարմնոյս.
Եւ ողորմեա Քո արարածոց
Եւ ինձ՝ բազմամեղիս:



## Ը

Գաղտնիքներ Քննող,
Մեղա Քեզ կամա և ակամա,
Գիտակցաբար և անգիտակցաբար,
Թողություն շնորհի՛ր մեղավորիս.
Քանզի ծնունդից սուրբ Ավազանի
Մինչև այսօր
Մեղանչել եմ
Քո Աստվածության առաջ
Իմ զգայարաններով
Եվ մարմնիս բոլոր անդամներով.
Եվ ողորմի՛ր Քո արարածներին
Եվ ինձ՝ բազմամեղիս:

## Թ

Ամենախնամ Տէր,
Դիր պահապան աչաց իմոց՝
Զերկիւղ Քո սուրբ
Ոչ եւս հայիլ յայրատ.
Եւ՝ ականջաց իմոց,
Ոչ ախորժել լսել զբանս չարութեան,
Եւ՝ բերանոյ իմոյ,
Ոչ խօսել զստութիւն,
Եւ՝ սրտի իմոյ,
Ոչ խորհել զչարութիւն,
Եւ՝ ձեռաց իմոց,
Ոչ գործել զանիրաւութիւն.
Եւ՝ ոտից իմոց,
Ոչ գնալ ի ճանապարհս
Անօրէնութեան.
Այլ ուղղեա զշարժումն սոցա՝
Լինել ըստ պատուիրանաց
Քոց յամենայնի.
Եւ ողորմեա Քո արարածոց
Եւ ինձ՝ բազմամեղիս:



## Թ

Ամենախնամ Տեր,
Քո սուրբ երկյուղը
Իմ աչքերին պահապան դի՛ր,
Որ էլ պագշոտ չնայեն,
Եվ՝ իմ ականջներին,
Որ չախորժեն լսել
Չարության խոսքեր,
Եվ՝ իմ բերանին, որ սուտ չխոսի,
Եվ՝ իմ սրտին,
Որ չար չխորհի,
Եվ՝ իմ ձեռքերին,
Որ չգործեն անիրավություն,
Եվ՝ իմ ոտքերին,
Որ չգնան անօրենության
ճանապարհով,
Այլ ուղղի՛ր շարժումը սրանց՝
Հետևելու ամեն ինչում
Քո պատուիրաններին.
Եվ ողորմի՛ր Քո արարածներին
Եվ ինձ՝ բազմամեղիս:

## Ժ

*Հուր կենդանի Քրիստոս,*
*Զհուր սիրոյ Քո, զոր արկեր յերկիր՝*
*Բորբոքեա յանձն իմ,*
*Զի այրեսցէ հոգւոյ իմոյ.*
*Եւ սրբեսցէ զխիղճ մտաց իմոյ,*
*Եւ մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ,*
*Եւ վառեսցէ զլոյս գիտութեան Քո*
*Ի սրտի իմում.*
*Եւ ողորմեա Քո արարածոց*
*Եւ ինձ՝ բազմամեղիս:*





## Ժ

Հուր կենդանի Քրիստոս,
Քո սուրբ հուրը երկրում տարածած
Բորբոքի՛ր իմ մեջ,
Որպեսզի այրի ախտը իմ հոգու,
Եվ սրբի իմ խղճմտանքը,
Եվ մաքրի մեղքերն իմ մարմնի,
Եվ վառի Քո գիտության լույսը
Իմ սրտում.
Եվ ողորմի՛ր Քո արարածներին
Եվ ինձ՝ բազմամեղիս:



Իմաստութիւն Հօր՝ Յիսուս,
Տուր ինձ իմաստութիւն՝
Զբարիս խորհել եւ խօսել եւ գործել
Առաջի Քո յամենայն ժամ.
Ի չար խորհրդոց, ի բանից
Եւ ի գործոց
Փրկեա զիս.
Եւ ողորմեա Քո արարածոց
Եւ ինձ՝ բազմամեղիս:





Հոր իմաստություն՝ Հիսուս,
Տո՛ւր ինձ իմաստություն,
Որ ամեն ժամ Քո առաջ
Խորհեմ, խոսեմ և գործեմ բարին
Եվ փրկիր ինձ
Չար խոհերից, խոսքերից
Եվ գործերից.
Եվ ողորմի՛ր Քո արարածներին
Եվ ինձ՝ բազմամեղիս:

*Կամեցող բարեաց*
*Տէր կամարար,*
*Մի թողուր զիս*
*Ի կամս անձին իմոյ գնալ.*
*Այլ առաջնորդեա ինձ՝*
*Լինել միշտ՝*
*Ըստ կամաց Քոց բարեսիրաց.*
*Եւ ողորմեա Քո արարածոց*
*Եւ ինձ՝ բազմամեղիս:*





Բարիք կամեցող,
Ո՜վ Տեր կամարար,
Մի՛ թող
Անձիս կամքով գնալ,
Այլ առաջնորդիր ինձ՝
Լինելու միշտ՝
Ըստ Քո բարեսեր կամքի,
Եվ ողորմի՛ր Քո արարածներին
Եվ ինձ՝ բազմամեղիս:

## ԺԳ

Արքայ երկնաւոր,
Տուր ինձ զարքայութիւն Քո,
Զոր խոստացար սիրելեաց Քոց,
Եւ զօրացո զսիրտ իմ՝
Ատել զմեղս
Եւ սիրել զՔեզ միայն
Եւ առնել զկամս Քո.
Եւ ողորմեա Քո արարածոց
Եւ ինձ՝ բազմամեղիս:





## ԺԳ

Արքա երկնավոր,
Տո՛ւր ինձ Քո արքայությունը,
Որ խոստացար Քո սիրելիներին,
Եվ զորացրո՛ւ սիրտս,
Որ մեղքերն ատեմ
Եվ սիրեմ լոկ Քեզ
Ու կամքդ կատարեմ.
Եվ ողորմի՛ր Քո արարածներին
Եվ ինձ՝ բազմամեղիս:



*Խնամող արարածոց,*
*Պահեա նշանաւ խաչի Քո*
*Զհոգի եւ զմարմին իմ*
*Ի պատրանաց մեղաց,*
*Ի փորձութեանց դիւաց*
*Եւ ի մարդոց անիրաւաց*
*Եւ յամենայն վտանգից*
*Հոգւոյ եւ մարմնոյ.*
*Եւ ողորմեա Քո արարածոց*
*Եւ ինձ՝ բազմամեղիս:*







Խնամող արարածների,
Խաչիդ նշանով
Պահպանի՛ր հոգիս և մարմինս
Մեղքերի պատրանքներից,
Դևերի փորձություններից,
Անիրավ մարդկանցից
Եվ բոլոր վտանգներից
Հոգու և մարմնի.
Եվ ողորմի՛ր Քո արարածներին
Եվ ինձ՝ բազմամեղիս:



## ԺԵ

*Պահապան ամենայնի Քրիստոս,*
*Աջ Քո հովանի լիցի ի վերայ իմ*
*Ի տուէ եւ ի գիշերի.*
*Ի նստիլ ի տան,*
*Ի գնալ ի ճանապարհ,*
*Ի ննջել եւ ի յառնել,*
*Զի մի երբէք սասանեցայց.*
*Եւ ողորմեա Քո արարածոց*
*Եւ ինձ՝ բազմամեղիս:*



## ԺԵ

Բոլորի պահապան Քրիստոս.
Թող Քո Աջը հովանի լինի ինձ վրա.
Գիշեր և ցերեկ,
Տանը նստելիս,
Ճամփա գնալիս,
Քնած թե արթուն,
Որպեսզի երբեք չսասանվեմ.
Եվ ողորմի՛ր Քո արարածներին
Եվ ինձ՝ բազմամեղիս:

## ԺԶ

*Աստուած իմ, որ բանաս զձեռն քո*
*Եւ լնուս զամենայն արարածս*
*Ողորմութեամբ Քով,*
*Քեզ յանձն առնեմ զանձն իմ.*
*Դու հոգա եւ պատրաստեա*
*Զպէտս հոգւոյ եւ մարմնոյ իմոյ*
*Յայսմհետէ մինչեւ յաւիտեան.*
*Եւ ողորմեա Քո արարածոց*
*Եւ ինձ՝ բազմամեղիս:*



## ԺԶ

Աստված իմ, որ բացում ես ձեռքդ
Եվ լցնում բոլոր արարածներին
Քո ողորմությամբ,
Քե՛զ եմ վստահում անձն իմ,
Դու հոգա՛ և պատրաստի՛ր
Հոգուս և մարմնիս կարիքները,
Այսուհետև մինչև հավիտյան.
Եվ ողորմի՛ր Քո արարածներին
Եվ ինձ՝ բազմամեղիս:

Դարձուցիչ մոլորելոց,
Դարձո զիս
Ի չար սովորութեանց իմոց
Ի բարի սովորութիւն.
Եւ բեւեռա ի հոգի
Իմ զսոսկալի օր մահուն,
Եւ զերկիւղ գեհենոյն,
Եւ զսէր արքայութեանն
Զի զղջացայց ի մեղաց
Եւ գործեցից զարդարութիւն.
Եւ ողորմեա Քո արարածոց
Եւ ինձ՝ բազմամեղիս:





Մոլորվածներին դու դարձի բերող,
Դարձրո՛ւ ինձ
Իմ չար սովորություններից
Բարի սովորության,
Իմ հոգում բևեռիր
Սոսկալի օրը մահվան,
Երկյուղը գեհենի
Եվ սերը արքայության,
Որպեսզի զղջամ մեղքերս
Եվ գործեմ արդարություն.
Եվ ողորմի՛ր Քո արարածներին
Եվ ինձ՝ բազմամեղիս:

## ԺԸ

Աղբիւր անմահութեան,
Աղբերացո ի սրտէ իմմէ
Զարտասուս ապաշխարութեան՝
Որպէս պոռնկին.
Զի լուացից զմեղս անձին իմոյ
Յառաջ քան
Զելանելն իմ յաշխարհէս.
Եւ ողորմեա Քո արարածոց
Եւ ինձ՝ բազմամեղիս:





## ԺԸ

Աղբյուր անմահության,
Բխեցրո՛ւ զղջման արցունքներն
Իմ սրտից,
Ինչպես պոռնիկից,
Որպեսզի լվամ մեղքերն իմ անձի
Նախքան հեռանալն իմ
Այս աշխարհից.
Եվ ողորմի՛ր Քո արարածներին
Եվ ինձ՝ բազմամեղիս:



Պարգեւիչ ողորմութեան,
Պարգեւեա ինձ
Ուղղափառ հաւատով
Եւ բարի գործով,
Եւ սուրբ մարմնոյ
Եւ արեան քո հաղորդութեամբ
Գալ առ Քեզ.
Եւ ողորմեա Քո արարածոց
Եւ ինձ՝ բազմամեղիս:





Պարգևիչ ողորմության,
Պարգևի՛ր ինձ
Ուղղափառ հավատով
Եվ բարի գործով,
Եվ Քո սուրբ Մարմնի
Եվ Արյան հաղորդությամբ
Գալ դեպի Քեզ.
Եվ ողորմի՛ր Քո արարածներին
Եվ ինձ՝ բազմամեղիս:

*Բարերար Տէր,*
*Հրեշտակի բարւոյ*
*Յանձն արասցես զիս՝*
*Քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ.*
*Եւ անխռով անցուցանել*
*Ընդ չարութիւն այսոցն,*
*Որք են ի ներքոյ երկնից.*
*Եւ ողորմեա Քո արարածոց*
*Եւ ինձ՝ բազմամեղիս:*







Բարերար Տեր,
Ինձ բարի հրեշտակին հանձնիր,
Որ հոգիս
Քաղցրությամբ ավանդեմ,
Եվ անխռով անցնեմ
Դևերի չարությունից,
Որոնք գտնվում են երկնքի ներքո.
Եվ ողորմի՛ր Քո արարածներին
Եվ ինձ՝ բազմամեղիս:



## ԻԱ

*Լոյս ճշմարիտ Քրիստոս,*
*Արժանաւորեա զհոգի իմ*
*Ուրախութեամբ տեսանել*
*Զլոյս փառաց Քոց*
*Ի կոչման աւուրն*
*Եւ հանգչել յուսով*
*Բարեաց յօթեւանս արդարոց*
*Մինչեւ յօր մեծի գալստեան Քո.*
*Եւ ողորմեա Քո արարածոց*
*Եւ ինձ՝ բազմամեղիս:*



## ԻԱ

Լույս ճշմարիտ՝ Քրիստո՛ս,
Արժանացրու հոգիս
Այն կանչի օրը
Ուրախությամբ տեսնել
Փառքը Քո լույսի
Եվ արդարների օթևանի մեջ
Հանգչել բարեհույս,
Մինչև Քո գալստյան մեծ օրը.
Եվ ողորմի՛ր Քո արարածներին
Եվ ինձ՝ բազմամեղիս:

*Դատաւոր արդար,*
*Յորժամ գաս փառօք Հօր դատել*
*Զկենդանիս եւ զմեռեալս՝*
*Մի մտաներ ի դատաստան*
*Ընդ ծառայի քում,*
*Այլ փրկեա զիս*
*Ի յաւիտենական հրոյն*
*Եւ լսելի արա ինձ*
*Զերանաւէտ կոչումն արդարոց՝*
*Յերկնից արքայութիւնդ.*
*Եւ ողորմեա Քո արարածոց*
*Եւ ինձ՝ բազմամեղիս:*







Արդար դատավոր,
Երբ Հոր փառքով գաս դատելու
Ողջերին և մեռածներին.
Դատի մի՛ մտիր
Քո ծառայի հետ,
Այլ փրկիր ինձ
Հավիտենական հրից
Եվ լսելի արա ինձ
Արդարների կանչն երանավետ
Դեպի արքայությանդ երկնային.
Եվ ողորմի՛ր Քո արարածներին
Եվ ինձ՝ բազմամեղիս:



## ԻԳ

*Ամենողորմ Տէր,*
*Ողորմեա*
*Ամենայն հաւատացելոց ի Քեզ`*
*Իմոց եւ օտարաց,*
*Ծանօթից եւ անծանօթից,*
*Կենդանեաց եւ մեռելոց.*
*Շնորհեա եւ թշնամեաց իմոց*
*Եւ ատելեաց զթողութիւն,*
*Որ առ իս յանցանացն.*
*Եւ դարձո զնոսա*
*Ի չարեացն,*
*Զոր ունին վասն իմ,*
*Զի ողորմութեան Քում*
*Արժանի եղիցին.*
*Եւ ողորմեա Քո արարածոց*
*Եւ ինձ` բազմամեղիս:*



## ԻԳ

Ամենաողորմ Տեր,
Ողորմի՛ր բոլոր
Քեզ հավատացողներին,
Մերոնց և օտարներին,
Ծանոթներին և անծանոթներին,
Ողջերին և մեռածներին,
Թողություն շնորհի՛ր
Թշնամիներիս և ատողներիս
Իմ դեմ գործած
Հանցանքների համար
Եվ նրանց
Ետ դարձրու չարությունից,
Որ ունեն իմ դեմ,
Որ արժանանան Քո ողորմության.
Եվ ողորմի՛ր Քո արարածներին
Եվ ինձ` բազմամեղիս:

*Փառաւորեալ Տէր,*
*Ընկալ զաղաչանս ծառայի Քո*
*Եւ կատարեա ի բարի*
*Զխնդրուածս իմ*
*Բարեխօսութեամբ*
*Սրբուհւոյ Աստուածածնին*
*Եւ Յովհաննու Մկրտչին,*
*Եւ սրբոյն*
*Ստեփաննոսի Նախավկային,*
*Եւ սրբոյն*
*Գրիգորի մերոյ Լուսաւորչին,*
*Եւ սրբոց առաքելոց, մարգարէից,*
*Վարդապետաց, մարտիրոսաց,*
*Հայրապետաց, ճգնաւորաց,*
*Կուսանաց եւ ամենայն սրբոց Քոց,*
*Երկնաւորաց եւ երկրաւորաց,*
*Եւ քեզ փառք եւ երկրպագութիւն*
*Անբաժանելի Սուրբ Երրորդութեանդ,*
*Յաւիտեանս յաւիտենից, ամէն:*





Փառավորյալ Տեր,
Ընդունի՛ր ծառայիդ աղաչանքները
Եվ ի բարին կատարիր
Իմ խնդրանքները
Բարեխոսությամբ
Սրբուհի Աստվածածնի
Եվ Հովհաննես Մկրտչի,
Եվ Սուրբ
Ստեփանոս Նախավկայի,
Եվ մեր սուրբ Գրիգոր Լուսավորչի,
Եվ սուրբ առաքյալների,
Մարգարեների,
Վարդապետների, մարտիրոսների,
Հայրապետների, ճգնավորների,
Կույսերի և Քո բոլոր
Երկնային և երկրային սրբերի,
Եվ Քե՛զ փա՜ռք և երկրպագություն,
Անբաժանելի Սուրբ Երրորդությանդ,
Հավիտյանս հավիտենից, ամեն:



Գրքի ձևավորումը՝
Աստղիկ Եպիսկոպոսի,
Ղևոնդ քահանայի